Տարազը լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 17 կիրակի 5 մայիսի | երկրորդ տարի 1896

Շարունակւում է ներկայ **1896** թ. թաժանորդագրութիւնը պատկերազարդ Աղբիւր ամսագրի եւ Տարազ շաբաթաթերթի

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 р. (արտասահման 4 р.), ՏԱՐԱԶԻՆ 6 р. (արտասահման 10 р.), ամսականն Տարազը—50 կ., Աղբիւրը—25 կ.
ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ միեւնոյն հասցեով գրւող թաժանորդները ստանում են պրեմիաներ եւ զանազան յաւելուածներ, ընծաներ:
Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. журн. Агбюръ-Таразъ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Գեւոնդ արք-եպ. Զիւմաճեան.
Կարինի նախկին առաջնորդ

ԻՐԻԿՆԱՓԷՄԻՆ

Ա՜հա շարժուն, մեռաքալ մակերեւոյթը ծովի
Փառաքշում է ծածկաբար ջերմ շնչովը մեղմ հովի,
Եւ վերջալոյսը նրան ոսկեզօծում է վառում,
Մինչդեռ արեւն է մարում:

Հայն երկնքի կապուտակին, թափանցիկ ու փայփայող,
Դիտում է յայն ծովի վրայ գրկախառնութեամբ շոյող
Եւ վրան յանկարծ վառւում է, իբր լոյս կոյսի վառ աչին,
Պայծառ աստղն առաջին:

Թաւշէ վարդի բուրմունքը, սուր հոտերը ծովային,
Եւ թարմութիւնը քնքոյշ երկրի ամռային
Մթնոլորտն են լցնում մի ջերմութեամբ սիրասուն,
Արբեցընող, փափկասուն:

Մինչ մերթ քաղցը նինջ առնող, մերթ կենդանի ջրերի

Արծաթակուռ ճիգ շղթան իրանն զրկում՝ է երկրի
Եւ ղողղոջուն զարկերը մշտատրտունջ ծըփերին
Հալում՝ են լուռ ափերին:

Քա՜ղցրը ժամ, երբ երազներս ղրանց վրայով են սաւառնում,
Սրտիս զարկը ջրերի զարկերի հետ են խառնւում,
Եւ մթնշաղի քողի տակ տիեզերքը լռազմա-զրաղ
Թւում՝ է տաճար մի խաղաղ:

Լ.*

Ադինապի նահակները

«ԹԱԳԱՒՈՐ Ի ՏԱՆԷ ԴԱՒԹԻ*)»

(Professor I. H. Ingraham)

Դաւներից դուրս գալով՝ ես և Յովսէփ Արեմաթացին բաժանուեցինք ամբոխից և դաշտով գնացինք ուղիղ դէպի Յորդանան, որը մեզանից կէս մղոն տարածութեան վրայ է գտնւում։ Առաւօտը հրաշալի էր. պայծառ արեգակը ուրախացնում էր ողջ բնութիւնը և ցօղի կաթիլների մէջ անդրադարձնելով բիւր ցոլմունքներ, երկիրը պարծրել էր ալմաստներով զարդարւած հրաշալի զորդ։

Ճանապարհը սկզբում անցնում էր հովտի և ցանած դաշտերի միջով, սակայն ստիպւած եղանք շուտով փոխել, որ բարձրանանք մի մեծ սարահարթ, որտեղ հօտերով արածում էին վայրենի էշեր։

Նրանք ուրախ խաղում էին, դէպի մեզ ուղղելով երկչոտ հայեացքներ, և որքան մօտենում էինք, նրանք էլ արագ փախչում էին անապատ, ինչպէս անտիլոպներ։

Նկատելով, որ ժողովրդի մեծ մասը կտրելով դաշտը, ուղիղ էր գնում, վճռեցինք, որ ամենայն հաւանականութեամբ մենք էլ պէտք է նոյն ուղղութիւնը բռնենք, և, արդարև, մի քանի ժամւայ ճանապարհից յետոյ մենք հասանք դետի ափը, այնտեղ, որտեղ գտնւում էր Մարգարէն. կէս մղոն հեռու Բալբէկից Աստեսատան տանող կարաւանի մեծ ճանապարհից, որը ոռոգել է Յուդայի թագաւորների արտասուքներով և որով գերի էին տանում Իսրայէլի ստրկացած զաւակներին։ Դեսի ափով անցնելիս՝ ես նկատեցի նրա ուղիղ մէջտեղը բարձրացած քարերի մի կոյտ։ Այդ կոչւում է «Քարէ սար», ասաց ուղեկիցս, որ կանգնացրել են Իսրայէլի տասներկու ցեղերը տասներկու քարերով ի յիշատակ իրանց Յորդանանից անցնելուն։ Այդ տեղում ջուրը չետ քաշւեցաւ և իսրայէլացիք անցան ցամաք գետնի վրայով։

Այն օրից, մտածեցի ես, երբ մեր հայրերը քարեր էին ժողովում այդ նշանաւոր յիշատակարանը կանգնելու համար, քանի՜ քանի՜ անհաւատալի և անընդհատ փորձութիւններ է կրել Իսրայէլի ժողովուրդը. պատաւորների և թագաւորների ամբողջ սերունդները, պատերազմները, պաշարումները և չարութիւնները, երկար և ծանր դերութիւն և վերջապէս՝ վերջնական ստրկութիւն։ Ջուտով հասանք Յորդանանի ճանճաղուտը, որտեղից սկսեցինք մօտենալ ժողովրդի խուռն բազմութեանը, որ նկատելի էր միւս ափից։ Նա շրջապատել էր դետի մօտ մի աւազոտ բլրակ։ Այդ բարձրութեան վրայ կարգնած էր մի մարդ, որի վրայ կենդրոնացել էին բոլոր իր շրջապատողների հայեացքները։ Նրա ղէմ, ներդաշնակ և միևնոյն ժամանակ խիստ ձայնի հնչիւնները հասնում էին մինչև մեզ, բայց հեռաւորութեան պատճառով չէինք որոշում նրա բառերը։ Դէմքով երիտասարդ է, իսկ տարիքը երեսունից չէ անցնում։ Նրա դեղեցիկ դէմքը իր կանոնաւոր գծերով յիշեցնում էր մեր նախահայր Յովսէփ իշխանին, ինչպէս ներկայացնում են նրան եգիպտական մէդալները. և չընայելով նրա անվրդով հանգստութեան արտայայտութեանը, նրա հրաշալի աչքերը լի են կրակով և ոգևորութեամբ։ Երկար, մուգ մազերը թափւած են ուսերի վրայ և ուղտի մազից պատմուճանը ծածկում է նրա բարեկազմ իրանը, բացի այդ թևից, որ մերկ է մինչև ուսը։ Փառահեղ դէմքը արտայայտում է իշխանութիւն ունեցող զօրապետի անկախութիւն և զօրութիւն. միևնոյն ժամանակ նրա ամեն մի շարժողութեան մէջ երևում է հեղութիւն և աննկեղծ սլարզութիւն, իսկ ժողովրդին խօսած քարոզների մէջ արտացոլում է խորին հնազանդութեան գիտակցութիւն և սրբական չափաւորութեան զգացմունք, որոնցով կարծես համակւած է նրա ամբողջ էութիւնը։ Ամենքը լսում էին նրան լարւած ուշադրութեամբ։ Նրա քարոզի նիւթն էր մարգարէների նախագուշակած Մեսիայի գալուստը։ «Պարծ, Իսրայէլ առ Տէր Աստւած քո, ասում էր նա, երբ մօտեցանք նրան, զի տկարացար յանօրէնութիւնս քո [1])»։ Ահա գալիս է Նա, Որը պիտի բժշկէ ձեր անկումը և պէտք է ընդունէք ձեզ սիրով։ Նա կըլինի Իսրայէլի համար ցօղ, Նա կըծաղկի ինչպէս շուշան, կընդարձակվին Նրա ճիւղերը և կըգեղեցկանան, ինչպէս պըտղալից ձիթենիներ և նրա պտուղները կըլինեն բժշկութիւն բոլոր ազգերի համար։ Կրգան, կըընակեն Նրա ստուերի տակ [2]) և կապրեն յաւիտենական կեանքով, և ամեն մարդ, որ կըկանչէ Տիրոջ անունը, կըփրկվի [3])։

—Այս հէմ մասին է ասում Մարգարէն, հարցրեց կողքիս կանգնած մի մարդ։

—Մեսիայի մասին, պատասխանեց մի պալիր՝ ըստ երևութին զժգոհ նրա համար, որ իր ուշադրութիւնը խանգարեցին կողմնակի հարցով։

—Ինչեցէք փողերը Սիօնի վրայ, շարունակեց Մարգարէն՝ բարձրացնելով ձայնը,—որովհետև մօտենում են օրերը, ասում է Տէր, երբ ես պէտք է վերադարձնեմ գերութիւնից Իմ ազգը [4]). դուրս բերէք ձեր դերանդիները, որովհետև հասել է հունձը, գոչում է Տէրը Սիօնից և տալիս է Իր ձայնը Երուսաղէմից [5])։

*) Տես Տարազ № 15.

[1]) Ովսէ. գլ. ժգ. 2.
[2]) Ովսէ. գլ. ժգ. 5, 6, 7, 8.
[3]) Յոայէլ. խգ. 11.
[4]) Երեմ.—Լ.—3.
[5]) Ամովս. Ա.—2.

—Եղիան չէ՞ արդեօք դա, հարցրեց մէկը ամբոխի միջից։

—Ես Նա եմ, որի մասին ասւած է.—«Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհս Տեառն և ուղիղ արարէք զշաւիղս Աստուծոյ մերոյ։ Մերձ է օր Տեառն [1])։

—Արդեօք՝ դու ինքդ չէս Մեսիան, հարցրեց մի ծերունի կին, որ կանգնել էր նրա կողքին և նրա վրայ էր կենդրոնացրել իր բոլոր ուշադրութիւնը, որպէս պի մարգարէի բերանից ելած և ոչ մի բառ բաց չըթողնի։

—Ո՛չ, պատասխանեց նա անխման հեզութեամբ,—իմ եռւից եկողը ինձանից աւելի զօրաւոր է, ես արժանի չեմ Նրա կօշիկը կրելու։ Իմ եռւից եկողը կացինը բռնած է Իր ձեռքում, նա կըմաքրէ Իր կալը և կըժողովէ Իր ցորենը շտեմարանը, իսկ յարդը կայրէ անհանգչելի կրակով [2])։

—Վարդապետ, դարձաւ նրան՝ ներկայ զևտացիներից մէկը,—այդ ում համար ես ասում։ Մեզ, Իսրայէլի պաւակների համար, թէ՞ հեթանոսների և Սամարացիների համար,—ըստ որում ժողովրդի մէջ քիչ չէին հռոմայեցիներ և շատ եկւորներ՝ Սամարիայից և մինչև անգամ Դամասկոսից։

Մարգարէն քննական հայեացք ձգեց նրա վրայ և շարունակեց.

—Երկու չարութիւն է գործել իմ ժողովուրդը, ասում է Տէրը. թողել է ինձ, կենդանի ջրի աղբիւրս և փորել է իրան համար ծակծկոտ հորեր, որոնք չեն կարող պահել ջուրը։ Եւ ահա Տէրը ինձ կանգնացրել է իբր երկաթէ սիւն և պղնձէ պարիսպ Յուդայի թագաւորների, նրա քահանաների և այս երկրի ժողովրդի դէմ [3])։ Ո՛վ Իսրայէլ, ինչպէս կարող ես ասել՝ «չեմ պղծւել» [4])։ Քեզ կըպատժէ քո անառնութիւնը և կըյանդիմանէ անհաւատարմութիւնդ [5])։ Ապաշխարութեան արժանի պատուղներ ցոյց տւէք [6]), որովհետև ձեր անօրէնութիւնները հեռացրել են ձեզ Տիրոջից և ձեր մեղքերը խափանել են ձեզանից բարին [7])։ Ուղղեցէք ձեր ճանապարհներն ու գործերը, անձնասուր մի լինէք դատարկ խօսքերի՝ ասելով. —«Այստեղ է Տիրոջ տաճարը»,—ըստ որում դուք նրան աւազակների այր էք դարձրել [8])։ Ձեր զոհաբերութիւնները պիղծ են Նրա համար [9])։

—Քո խօսքերդ մեզ են վերաբերում, վարդապետ, բարկացած խօսեց քահանաներից մէկը՝ դառնալով Մարգարէին,—բայց մենք աւազակ չենք ընդունում մեզ։

—«Վա՛յ հովիւներին, ասում է Տէրը,—պատասխանեց Մարգարէն՝ բոլոր ներկայ եղողներին ցնցող ձայնով, —«Վա՛յ հովիւներին», որոնք ոչնչացնում են Իմ ոչխարները։ Դուք նրանց չըհսկեցիք և ահա ես ձեզ պատժում եմ ձեր չար գործերի համար [10])։ Արդ, լսեցէք, դուք, քահանաներ և ուսուցիչներ, դուք, որ ինձ չըճանաչեցիք. դուք գողանում էք, սպանում էք, սուտ էք երդւում և օտար աստւածների եռւից էք գնում, որովհետև երկրիս վրայ չըկայ՝ ո՛չ ճշմարտութիւն, ո՛չ գթութիւն, ո՛չ աստւած գիտութիւն։ Վա՛յ ձեզ, վա՛յ, քահանաներ» [1])։

Այդ խօսքերի վրայ շատ զևտացիներ բարկացած երեսները դարձրին նրանից և մի կողմ քաշւեցին։ Նրանք ուրախ կըլինէին, որ հէնց այնտեղ իրանց չարութիւնը թափէին նրա վրայ, բայց վախենում էին ժողովրդից, որ ո՛չ միայն չէր հերքում նրանց հասցէին ասածը, այլ և շատ ճշմարտութիւն էր գտնում նրա խօսքերի մէջ։

—Իսկ Իսրայէլի զաւակները,—որոնք առաջ են եկել Աբրահամի սերունդից, դրանով կարող են արդարանալ, հետաքրքրւեց մեր քաղաքի հարուստ իշխաններից մէկը երբ մի փոքր հանդարտւեց զևտացիների տրտունջով ծագած շփոթութիւնը։

Երիտասարդ Մարգարէն արեգակի պէս փայլող աչքերը դարձրեց նրան և ասաց. «Եւ չըմտածէք ձեզ ու ձեզ ասել.—«Ունինք հայր զԱբրահամ»—որովհետև ասում ևմ ձեզ, որ Աստւած կարող է այս քարերից որդիք հանել Աբրահամի համար [2])։

Այստեղ լսեցին անբաւական ձայներ և առանձին կանգնած փարիսեցիների զայրացած տրտունջը, բայց նա, ձգելով նրանց վրայ պայծառ, ամենագէտ հայեացք, կարծես թէ կարդում էր նրանց սրտի մէջ եղածը. «Ծնո՛ւնդք իժից», արհամարհանքով դիմեց. «ո՞վ սովորեցրեց ձեզ փախչել եկող բարկութիւնից։ Ապաշխարութեան պտուղներ բերէք, որ տեսնէք փրկութիւնը [3])։ Իսկ դուք, Իսրայէլի աղջիկներ, ասաց նա՝ դառնալով մի խումբ կանանց, որոնցից մի քանիսը աչքի էին ընկնում զարդարանքների ճոխութեամբ,—լաց եղէք, ողբացէք, քուրձ հագէք, ապաշխարութեան արտասուքնե՞ր թափեցէք։ Թէև դու Ծիրանի ես հագնում, ասում է Տէրը, թէև դու քեզ զարդարում ես ոսկէ զարդարանքներով, թէև աչքերդ ծարուրում ես ներկերով, բայց ի զո՞ւր ես զարդարւում, որովհետև ես լսում եմ Սիօնի աղջիկների ձայնը։ Նրանք հառաչում են, պարզելով իրանց ձեռքերը. նրանց հոգիները մաշւում է իրանց անպատուութեան առաջ։ Ապաշխարեցէք, որովհետև Աստծու արքայութիւնը մօտենում է։ Ես կըվերանորոգեմ Դաւթի սուրբ շառաւիղը, ասում է Տէրը, նա կըթագաւորէ և իմաստութեամբ և արդարութեամբ դատ կըտեսնէ երկրի վրայ։ Այն օրերը Յուդան կըփրկւի և Իսրայէլը կապրէ ապահով։ Եւ կըկարգեմ նրանց վրայ հովիւներ, որոնք կըհովւեն նրանց և նրանք այլ ևս չեն կորչիլ։ Վեր կաց, սրբւիր, Երուսաղէմ, որովհետև գալիս է քո Լոյսը և քո վրայ փայլում է Տէ՛րը։ Եւ կըդիմեն ազգերը դէպի քո Լոյսը և Թագաւորը, դէպի քո վերևը ծագող ճաճանչը։ Եւ կըկոչեն քեզ նոր անունով, որ կանւանէ Տիրոջ բերանը և կըլինիս փառքի սլակ Նրա ձեռքի մէջ։ Բարձրացրու աչքերդ, ասում է Եսայի, և չորս կողմդ նայիր։ Որդիքդ գալիս են հեռւից և քո աղջիկներիդ իրանց ուսերի վրայ են բերում։ Ազգերը ի՛նչհետևանան ինչպէս ամպեր և ինչպէս աղաւնիներ՝ կըթռչեն իրանց աղաւնոցները. կըխոնարհին Նրա առաջ և երկրպագութիւն կանեն

---

[1]) Եսայի. Գ.—3.
[2]) Մատթ. Գ. 10, 11, 12.
[3]) Երեմ. Ե. 13 և Ա. 18.
[4]) Երեմ. Ե. 28.
[5]) Երեմ. Ե. 19.
[6]) Մատթ. Գ. 8.
[7]) Երեմ. Ե. 25.
[8]) Երեմ. Է. 3, 4, 11.
[9]) Եսայի. Ա. 13.
[10]) Երեմ. ԻԳ. 1, 2.

[1]) Երեմ. ԻԳ. 14.
[2]) Ղուկ. Գ. 8.
[3]) Ղուկ. Գ. 7, 8.

Նրան։ Եկէք, բազցաճնե՛ր, բարձրացրեց ձայնը Մարգարէն,—ճարաւնե՛ր, մօտեցէ՛ք բոլորդ էլ ջրերին. դնեցէ՛ք դինի և կաթ առանց արծաթի և վարձի։ Եկէ՛ք Նրա մօտ և կենդանի կըլինի ձեր հոգին, որովհետև այսպէս է ասում Տէրը, որը ստեղծել է երկինքը և նրա տարածութիւնը, որը ընդարձակել է երկիրն իր արտադրութիւններով, որ կեանք է տալ նրա վրայ եղող ժողովրդին և շունչ՝ այնտեղ մանկներին։ Ահա իմ որդին, որին իմ հոգիս հաճեց։ Իմ հոգիս նրա վրայ կըդնեմ և Նա ազգերին դատաստան կըյայտնի։ Ճախճախաձայ եղէգը չի փշրիլ և հանգչող պատրոյգը չի հանդցնիլ։ Ես քեզ ճշմարտութեամբ կանչեցի և քեզ կըտամ ուխտ ժողովրդիս համար և լոյս՝ հեթանոսներին։ Որ կոյրերի աչքերը բաց անես և կապանաւորներին ու խաւարի մէջ նստողներին՝ ազատես բանտից։ Ես իմ Անդրանկին բարձր կըդասեմ բոլոր երկրաւոր թագաւորներից։ Նրան դիմիր և կըփրկուես, դու, ողջ աշխարհ։ Նրա առաջ կըխոնարհի ամենայն ծունկ, Նրան կ'երդուի ամեն մի լեզու»։

Այսպէս էր այն անսովոր մեծ Քարոզչի խօսքը, վերջացրեց Յովհաննէսն իր հրաշալի պատմութիւնը։ Եւ ամենքի համար, ում որ լաւ ծանօթ են մարգարէների գրքերը, Նրա ամեն մի բառը պարզւում և լուսաւորւում էր արեգակնային լուսով։ Ամբոխը կանգնել էր Նրա մօտ յուզման և խորին լուռթեան մէջ։

Իսկ ես չէի կարողանում աչքերս հեռացնել այս հրաշալի աւետաբերից, և սիրտս սաստիկ խփում էր հոգեւոր ուրախութեան ճնշման տակ, որ համակել էր իմ ամբողջ էութիւնս։ Ես հաւատում էի, որ Տէրը յիշել է Սիոնը, որը շուտով կըփառաւորւի մի շարք հրաշքներով, որպիսիք մինչև այսօր չէ տեսել աշխարհը։

Իջնելով բլուրից, նա, ինչպէս թւում էր ինձ, հաւաքն ինձ ուղղելով ասաց.

Դուք բոլորդ, ով որ ցանկանում է մկրտվել և ապաշխարութեամբ սրտերը պատրաստել դիմաւորելու մեր Տէր Աստծուն, ինձ հետևեցէ՛ք։

Խուռն բազմութիւն նրան հետևեց. և ես առաջիններից մէկն էի։ Ձեմ կարող ձեզ նկարագրել ինձ պատող հիացումը, երբ նա բռնելով ձեռքս՝ հարցրեց.—հաւատո՞ւմ ես ինձանից յետոյ Եկողին, թէ ոչ։

Այն օրը, խոստովանելով մեր մեղքերը, յուսալով թողութիւն ստանալու խոստացած, բայց դեռ անկատար փրկչից, Յորդանանի մէջ մկրտեցինք մինչև հազար մարդ։ Նրանց մէջ կային նոյնպէս փարիսեցիներ, սադուկեցիներ և մինչև անգամ մի ալեզարդ հռոմայեցի։ Յովսէփ Արիմաթացին չէր կամենում մկրտվել, գոնելով, որ դեռ բաւականաչափ չէ ուսումնասիրել այդ սրբազան հարցը և դեռ բաւականաչափ չէ հաստատուել հաւատքի մէջ։

Մկրտութիւնից յետոյ հեռացանք բոլորն էլ ցրւեցին, իսկ Մկրտիչը քաշուեց անապատ՝ սպասելու երեկոյեան վրան։ Երբ նա վերադարձաւ, խուռն բազմութիւն դարձեալ սպասում էր նրան։ Երկրորդ քարոզի մէջ նա, կապելով մարգարէների վկայութիւնները անընդհատ «հետևողական շղթայով, աւելի պարզ ապացուցեց նրանց պատշաճիլը Քրիստոսի առաջիկայ յայտնութեանը»։

Այստեղ վերջացնում եմ, թանկագին հայր, երկար նամակս։ Ես չեմ մոռնում որ և է դատողութեան մէջ, միայն կասեմ, որ իմ բոլոր մտածողութիւնները կենդրոնացած են միայն մի առարկայի վրայ, և որ այլ հաղարաւորների հետ միասին ես հաւատում եմ, սպասում եմ, և յուսով եմ։ Ադիեա։

(Կըշարունակի)

Ե. ԱԼ.-ԻՆ

Օ՛! այն երգը դուք մի երգէք,
Որը միայն ես եմ երգել,
Օ! այն աստղը դուք մի՛ սիրէք,
Որը միայն ես եմ սիրել...

Այն երգը չէ կարող լսել
Անիոյթ հոգին ձեր մարդկային,
Այն երգը չէ կարող տանել
Ունայն կեանքը աշխարհային։

Այն աստղը ձեզ չի երևալ
Կորած ցախաի ետքից կրկին,
Եւ նա երբէք ձեզ չի ժպտալ
Մութ գիշերւայ ղժզախտ ժամին։

ԱՐԶԱԿ ԱԹԱՅԵԱՆ

ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Պարսկական երաժշտութիւնը չունի ձայնագրութիւն, հետևապէս ամեն մի եղանակ աւանդւում է բերանացի, և աւանդողի քմահաճութեան և արագ փոփոխութիւններին ենթակայ է։ Ահա հէնց այս հանգամանքը մեզ իրաւունք է տալիս կասկածելու, որ դարեր առաջ ստացած *ըայաթիններըը* դանազան քմահաճ երգիչների բերաններում պէտք է ենթարկուած լինին նշանաւոր փոփոխութիւնների, փոփոխութիւնները, որոնք անշուշտ վնասել են նրա արժանաւորութեանը, բնաւորութեանն ու ոգուն։ Սակայն ուրախալի է այն հանգամանքը, որ երբար յաջորդող այդքան դարերից յետոյ այդ եղանակները մնալով ժողովրդի լիշողութեան մէջ, երբէք չըկորցրին իրանց նշանակութիւնը, արժանաւորութիւնն ու բնորոշ յատկութիւնները։

Պարսկական հին երաժշտութիւնը, ձայնագրութիւնից զուրկ լինելով հանդերձ, իր եղանակների ձևերի, տեսակների և վարիանտների բացատրութեան համար ունի մի յիշատակարան, որի մէջ ամփոփում են հետաքրքիր տեղեկութիւններ։ Սա նրանց երաժշտութեան վերաբերեալ միակ գիրքն է, որ կոչւում է «*Էլմի մուսիկի*»։ Թէ արևելեան երաժշտութեան պատմութեան ուսումնասիրութեան գործին որքան պէտք է նպաստէ այդ յիշատակարանը, այդ մասին

առ այժմ ոչինչ չենք կարող ասել:

Վերջին ժամանակներում պարսկական երաժշտութիւնը չէ արտադրել աչքի ընկնող տաղանդ, բացի մի քանի աննշան երգիչներից: Նշանաւոր *Աֆղանսիաբից* և *Քարիաբիից* յետոյ մեզ Հասնում է *Աղարա Սուլթանի, Աղալի Նկղաստի* և *Սաֆտարի* նման երաժիշտների անունները, որոնց շնորհքի մասին աւանդութիւնը մեզ շատ աննշան բան է պատմում: *Այս տաղանդներից յետոյ* մեզ Հասել են *Քաթալի Շահի* պալատական երաժիշտ *Աղա-Ալաքպարի* և *Ղարամնհմամ Ջաֆարի* անունները: Առաջինի մասին պատմում են, թէ երբ նա ածում էր մաջլիսում (Հանդէս), ահագին ամբոխը շունչը կտրած, որպէս արձանացած պիակ մնում էր ամբողջ ժամերով նրա քաղցրահնչիւն ձայնի և երաժշտութեան դիւթական ազդեցութեան տակ:

Պարսկական երաժշտութիւնը բաժանւում է երկու դլխաւոր մասերի — կրօնական և ժողովրդական: Կրօնական եղանակների մէջ աչքի են ընկնում այն դեղեցիկ մեղեդիները, որոնք ընդհանուր անունով կոչւում են *մնաճաթի* (մեղեդի): Այդ մեղեդիները թէև եօթն են և բոլորն էլ բնաւորութեամբ տխուր են և մելամաղձոտ: Այս եղանակների մէջ իր առանձնայատկութեամբ նշանաւոր է *Նաւա* երաժշտութիւնը, որը եթէ մաջլիսներում (Հանդէս) երգւի, ժողովուրդը նրա ճնշող և տանջող մրմունջների ազդեցութեան տակ կրտիլի, կրյուսահատւի, որի հետեւանքը շատ անգամ եղել են կռիւներ և անբաւականութիւններ: Ժողովրդական եղանակներն ունին անհամար բաժանմունքներ. իսկապէս ասած՝ պարսկական երաժշտութիւնը ամեն մի դէպքի, տօնի, գիշերի և ցերեկի համար ունի իր առանձին եղանակները, որոնց Հասկացող երաժիշտը լաւ ուսումնասիրած պէտք է լինի: Օրինակի համար *ղուզևանը* մի ուրախ եղանակ է, որ այլապէս անւանւում է «*մայիսեան երաժշտութիւն*»: *Շուրը* — ոգևորութիւն և եռանդ արտայայտող երաժշտութիւն է, և լաւ երգիչները առհասարակ նւագածութիւնը կամ երգը սկսում են այս եղանակով:

Վերոյիշեալների և սրանց նման այլ բնաւորութիւններ ունեցող մի քանի նշանաւոր եղանակներից յետոյ՝ աչքի են ընկնում իրանց արժանաւորութեամբ առաջինը տեղը բռնող պարսկական էլէգիաները — *ղասյաթինները*, որոնք Համառօտ իրանց կրած անւան, բոլորն էլ կրում են վշտի, տխրութեան և մելամաղձութեան տխուր դրօշմը:

Բայաթինները արևելեան երաժշտութեան եղանակների մէջ առաջնակարգ տեղ են բռնում, և այդ դմայլելի երաժշտութեան խորքի մէջ ամենաբարձր ցօղունները են, և բոլորն էլ կլասիքական երաժշտութեան արդիւնք: Պարսիկ երաժիշտը անխտիր երգում ու ածում է նրանց սմեն մի դէպքի ժամանակ, իր ունկնդիրների վրայ թողնելով ճնշող և տխուր տպաւորութիւն, և ասես, այդ մելամաղձոտ վիճակից սթափեցնելու, ժողովրդի տրամադրութիւնը դէպի լաւի փոխելու համար, այդ եղանակներին կցում է ուրախ բնաւորութիւն ունեցող *զևսվները* և *թասնիֆները*: Սակայն այդ դեֆերն ու թասնիֆները միայն բայաթիների սեպհականութիւնը չեն. այս վոքրիկ ֆինալները աւելացւում են սմեն մի մեծ երաժշտութեան սկզբից և վերջից: Ի միջի այլոց պէտք է նկատել, որ այս յաւելւածները մեծ մասամբ հին յօրինողների հեղինակութիւնները չեն, այլ վերջին ժամանակների երգիչների արտադրութիւն: Պարսիկ նորագոյն երաժիշտները աշխատելով յարմարւել ներկայ վարք ու բարքի և զգացմունքների ընթացքին, ստեղծագործել են այդ կտորները, իրանց կարողութեան չափ մտցնելով նրանց մէջ ներկայ ժամանակակից երաժշտութեան ոգին ու բնաւորութիւնը:

Պարսկաստանի դրացի Հայոց երկրում այդ եղանակները միշտ երգւել են, որպէս սեպհական մտքի և զգացմունքների արտայայտութիւն, և մինչև այսօր, երկու տարբեր ժողովուրդներ, պահում ու փայփայում են միևնոյն զգացմունքներն ու ճաշակը: Թէ ինչ նշանաւոր ազդեցութիւն է ունեցել արևելեան երաժշտութեան վրայ Հայկական երաժշտութեան և բանաստեղծութեան Հայրենիք Հրաշակաւոր պատմական Վողթին գաւառը, այս մասին մենք կը խօսենք մի ուրիշ անդամ. բայց այսօր, այդ երկրին դրացի *Ղարաբաղի* ներկայի դերը շատ աչքի ընկնող է և արդիւնաւէտ: Անցեալ դարերից մինչև այսօր նա միշտ Հանդիսացել է երաժշտութեան սիրահար և Հայրենիք. միշտ աննկել և փայփայել է, թէև օտարի մատքն ծնուած, բայց իր ներքին ձայնին և զգացմունքներին այնքան մօտ երաժշտական ստեղծագործութիւնները... նա անշուշտ նրանց ձայնին խառնել է և իր սեպհական մրմունջն ու Հառաչանքը. իր սրտի յուզիչ բոպէներին չէ բաւականացել միայն օտարով. բայց այսօր, տարաբախտաբար, մենք չենք կարող որոշել սեպհականը օտարից... Այդքան մտերիմ և սերտ են եղել նրանք միմեանց Հետ: Վերջին ժամանակ արևելեան եղանակները Հետզհետէ դրւում են չափի և կանոնի տակ, դրւում են անջնջելի չիշատակարանի երկաթէ թերթերի վրայ, որից նա մինչև այսօր զուրկ է մնացել և ենթարկւել այնքան մեծ և աւերիչ վթարների: Ահա այն դերը, որով ներկայացաւ մեզ երաժիշտ *Տիգրանեան*: 1894—95 թուականներին ուսումնասիրած և ձայնագրած լինելով արևելեան էլէգիաներից երկու ամենանշանաւորները — *ղասյաթի-քիւրդը* և *ղասյաթի-շիրազը*, վերջին ժամանակներս նա պատրաստեց տպագրութեան Համար *Հէյդարի* և *Նոմրուզ աղասի* անուն կրող եղանակները: Բովանդակութեան կողմից նշանաւոր է նամանաւանդ վերջինը, որ թարգմանութեամբ նշանակում է *արարողական առաւօտ*: Նա բաց է անում մեր առաջև արևելքի առաւօտուայ նկարագրութիւնը: Փորձը խոսապէս աջող է, և ուշիմ ունկնդիրը նրա ձայների Հետ միասին Հոգով ու մտքով փոխա-

„Ամպիս ամխա, արդոյ ամխա“. ԳՈՐԾ Գ. ՄԱՐՔԼԼԻ.

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ. ԳՈՐԾ ԿՆԻԼԻՒ.

WIEN 65 BEATE 26.5.96 8-9 V

դրւում է խորհրդաւոր արևելքը և այն ջինջ պայծառ և աստղալից երկնքի վրայ տեսնում է աստղերի անհետանալը, արեգակի թափանցիկ ճառագայթների տարածումը և հալած բարձրացող նոճիների և արմաւենիների կատարների լուսաւորութիւնը։ Լսւում են թռչունների առաւօտեան քաղցրանուագ դայլայլները. լսւում է խաւարի թափառորութեան խորհրդաւոր հրաժեշտը... Զարթող օրւայ ազմուկների անորոշ շշունջի մէջ յանկարծ լսելի է լինում դէպի ամենակարող Աստած ուղղած մաղթանքներն ու երգերը... լսւում է արար կրօնաւորի դայլայլուն ձայնով երգած առաւօտեան *ազամը*, որ հնչելով բարձր և փառահեղ մխնարէթի գաղաթից, մահմեդական ժողովրդին յիշեցնում է Աստծու պարգեւած բարիքների օգտագործելը և յորդորում է միշտ երախտապարտ մնալ դէպի անսահման բարիքների պարգեւիչը...

Ինչպէս պարսկական, նոյնպէս և Հայկական երաժշտութիւնը շատ հին է, և նրա սկիզբը ծածկւում է անյայտ ժամանակների խորքերում։ Բայց ինչ իրաւունքով ենք մենք կապում իրար հետ այդ երկու ազգերի երաժշտութեան պատմութիւնը. կամ դուք մեզ հարցնեն, թէ ուստ Հայկական երաժշտութիւնը ինչ տեղ է բռնում իր մերձակաների աշխարհում. կամ թէ Հայկական երաժշտութեան ի՞նչ աղբիւրներն են իրաւունք տալիս նրան՝ հաւասար դաւել պարսկականի և արաբականի հետ միասին։ Մենք, մի քանի մանր և երկրորդական Հայկական եղանակներից զատ՝ մատնանիշ կ՚անենք մեր եկեղեցական անհամար շարականների բազմաթիւ ընտանիքը, որ այսօր մեզ ներկայանում է որպէս մեր անցեալ դարերի երգի և ճաշակի արտայտութիւն։ Հայկական եկեղեցական երաժշտութիւնը շատ նուրբ է և դեղեցիկ, նա նշանաւոր է իր մի քանի առանձնայատկութիւններով, որոնք իր ապագայ պատմութեան մէջ բռնելու են առաջնակարգ տեղ։ Եւ որպէս զի նրանք, մի օր դուրս գալով իրանց նեղ շրջանից, պատկան ժողովրդականն և աղգային եղանակների կեանքն ու ոգին, մեզ Հարկաւոր է մի Սերաստիոն Բախ (արևմտեան կլասիքական երաժշտութեան տաղանդաւոր հիմնադիրներից մէկը)։ Խօսելով Հայկական եկեղեցական երաժշտութեան մասին, չենք կարող անկեղծ հերքեանքով չդիմաւորել այն շնորհակալութեան արժանի դերը, որով մեզ ներկայանում է շնորհալի երաժիշտ *Տ՚. Նիկողայեան*։ Այս խօսքերի հետ մխասին մեր յիշողութեան մէջ արթնանում է այն աստւածային մրմունջն ու շշունջը, այն երկնային ձայների զգայմունքներով լի մանրիկ եղ և էջը, *ի խորոց սրտից ձայն հառաչանաց*-ների պայծառն և համապատասխան մեղեդիները, որոնց նա մօտրել է մի քանի շարականների քառաձայն երաժշտութեան մէջ, մնալով ոսկեայ հաւատարիմ ու անշեղ բուն եղանակների ոգուն, արժանաւորութիւններին ու բնորոշ ձևերին։ Հայ երաժշտի այդ քայլը արժանի է ամենայն շնորհակալութեան և քաջալերութեան։

Հայկական և պարսկական կրօնական երաժշտութիւնների փոխադարձ յարաբերութիւնների, նրանց անցեալի և ապագայում կատարելիք դերի մասին՝ մենք կխօսենք մի ուրիշ անգամ։

Պ. ՄՈՍՈՒԵԱՆՑ

ՎԵՐՋԻՆ ԴԱՍ

Հայոց Բարեգ. ընկ. Ախալցխայի Եիւղին

Հայոց Բարեգործ. Ընկերութեան Ախալցխայի ճիւղի վարչութիւնը Մուրճի (Լուսինեի) դէմ գրած մի շրջաբերական նամակով դիմել էր Թիֆլիսի հայոց բոլոր երեք օրաթերթերին, հրաւիրելով Տարազի խմբագրութեանը կարդալ այդ նամակը, որով ճիւղի վարչութեան անդամները ապացոյցներ էին պահանջում նաև այն բանի համար, որ Տարազը Ախալցխայի ճիւղը լմբոռս էր անւանել. Ապացոյցներ են ուզում այդ պարոնները այնպիսի մի բանի մասին, որը այնքան յայտնի է Բարեգ. Ընկերութեան իւրաքանչիւր անդամին։ Բայց քանի որ խնդիրը այն է, որ մենք ապացոյց բերենք, որը մի՛ անդամից կորէ այդ անհանդիստ մարդկանց ձայնը, ուստի հրաւիրում ենք կարդալ նոյն իսկ Խորհրդի մի պաշտօնական արձանագրութիւնից վերցրած այս վկայութիւնը Ախալցխայի ճիւղի ըմբոստութեան մասին։ Այդ արձանագրութեան հետ մեզ ծանօթացնողը Մուրճի № 3—4 միացեալ համարն է, իսկ արձանագրութիւնը կազմած է 25 յունւար 1895 թ., ստորագրութեամբ խորհրդի նախագահող Ե. Մելիք Ղարագեօզեանի (այժմ հանդուցեալ), Ալ. Մելիք-Ազարեանի, Ներսէս Աթաբէգեանի, Յ. Սպենդիարեանի և բժկ. Վահան Արծրունու։ Արդ դրանք վկայել են պաշտօնական արձանագրութեամբ թէ (լսեցէք)—

> «Ընդհանուր ժողովում մի քանի անգամ կարդացել և քննել են Ախալցխայի (ճիւղի) վարչութեան զանցառութիւնների մասին... 1891, 92 և 93 թուականների զեկուցումների և տեղեկագիրների մէջ արձանագրուած են Ախալցխայի (ճիւղի) վարչութեան զանցառութիւնները... (Ախալցխայի ճիւղի) վարչութիւնը զլացել է ծաս անգամ կատարելու կենդրոնի օրինական պահանջներ, դուցմուիմներ և հրահանգներ»։

Յոյս ունինք, որ այսուհետև Ախալցխայի ճիւղի վարչութիւնը կըսովորի լեզուն կարճ պահել, բայց որ գլխաւորն էր՝ որ ուշ դասերից խրատւելով դէթ այսուհետև կաշխատի իր օրինապահութեամբ կարգին մարմնի անուն վաստակել։ Այդ է մեր ցանկացածը, և այդ է որ մեզ դրդել է խոստութիւն բանեցնել Ախալցխայի ճիւղի վերաբերմամբ։

Յոյս ունինք, որ այլևս առիթ չի տրւիլ մեզ վերադառնալ այս խնդրին։

գեղարուեստ

Հայկական թատրոն

Очерки, Фельетонъ.

Որւսաց ժամանակակից դրողների շարքում Պատապենկօն պատւաւոր տեղ է բռնում թէ իր ձիրքով և թէ մանաւանդ գրչի բեղմնաւորութեամբ։ Իբրև բելլետրիստ նա գրում է զգայմունքով և կենդանի։ Նրա երկերը չեն կրում այն բռնազբօսիկ «խորհրդաստութեան» դրոշմը, որով ճգնում է վայելել այժմեան ռուս գրողների մեծ մասը։ Նա լեռ չի ձևւանում, որ մակ ծնելով, ծիծաղ զարթեցնել ընթերցողների մէջ։ Նա գրում է պարզ,

անպահոյճ և կենդանի: Ճշմարիտ է, շատ անգամ գրում է ջրալի, անեղի բաներ, բայց լինչ-որ գրում է, կարդացւում է անձանձրոյթ: Նա շատ լաւ է հասկանում, որ իր պարզ, հասարակ և շատ անգամ շաբլոնայնի դաղափարների կշիռը մազի չափ չի կարող աւելանալ, եթէ նրանք ճաճկւին մի անթափանցելի մոխրագոյն քօղով:

Փոյթ չէ, որ նրա երկերը դեղարւեստական տեսակէտից կազում են և երբեմն չեն կարող լուրջ կրիտիկայի դիմանալ. բայց ունեն օգտակար ազդեցութիւն ընթերցողների վրայ. օրինակ «На художественной службѣ» վէպը, որ հայերէն էլ թարգմանուած է «Դաղափարական քահանայ» վերնագրով: Այդ վէպը ինքն ըստ ինքեան մի զեղարւեստական աչքի ընկնող գործ չէ, բայց այն սիրուն, համակրելի դաղափարը, որ կամեցել է արծարծել հեղինակը, դրսւիչ է և օգտակար այժմեան ռուս ընթերցողների համար:

Նոյնչափ օգտակար է և խրատական ռուս հասարակութեան համար և հեղինակի «Օտարներ» կոմեդիան, որ մեծ աղմուկ յարուցեց ռուս մամուլի մէջ և որի հայերէն թարգմանութիւնը ներկայացւեց առաջին անգամ անցեալ կիրակի վրաց ազնւականների թատրոնում երիտասարդ դերասան Օհանեանի երկրորդ դերբւտին: Պատմենք մի քանի խօսքով այդ պիեսի բովանդակութիւնը:—

Կոնստանդին Ապոլլոնովիչ Դրբոյլովը (Օհանեան) նոր է ամարտել համալսարանը և մտել կեանքի մէջ: «Նա Դեղեցիկ է, խելօք, զրսւիչ, ազնիւ. նա մերոնցից է», ասում է նրա մասին Ապոլլոն Արկադիևիչը—նրա հայրը (Վրոյր), այդ դիւրահաւան, ազնիւ, մաքուր լրէալիստը: Եւ «միամիտ մարդու ասած այդ խելօք և ազնիւ» երիտասարդը մի քիչ անցած՝ յանկարծ պարզում է իր հայեացքները կեանքի մասին, իր մօր վաղեմի բարեկամի, նոյնպէս մաքուր լրէալիստ Ջաւդեատովի (Բէգեան) մօտ, և մենք տեսնում ենք բեմի վրայ այն նոր տեսակի հրէշներից մէկին, որոնք իրանց բարոյական այլանդակութիւնը հաստատում են դիտնական և փիլիսոփայական հիմունքների վրայ:

«Պէտք է ապրել և լաւ ապրել», ահա նրա նշանաբանը, և այդ նշանաբանն իրագործելու համար պիտում է ամենատարբ միջոցների: Նա առանց խղճի խայթոցի ձրդում է իր նախկին սիրեցեալ Մարիա Իգնատիեւնա անունով աղքատ օրիորդին (օր. Վարդուհի): Փոյթ չէ, որ նա զրկել է օրիորդին կուսութիւնից, պարգևել է նրան մի զաւակ, նա ձգում է նրան և ընկնում Հարուստ և տակաւին երիտասարդ այրի Ուսկինայի (տիկ. Մելիքեան) գիրկը: Զրկարծէք, թէ սիրուց դրդւած, այդ դեռ հասկանալի կըլինէր, այլ միայն յափրշտակելով այրիի միլլիոնով: Փորձողութիւնը կատարւում է մի գաւառական քաղաքում: Այրին հետամուտ է և մի ուրիշ Հերոս, նոյնպէս մի ժամանակակից տիպար, վաստակաւոր Կրուտանոսովը (Մանուէլեան), Կոնստանտին Ապոլլոնովիչի բարոյական պատճէնը և ֆիզիքական հակապատկերը, որովհետև, վերջինի հակառակ, նա տգեղ է դէմքով և կոպիտ-ձևերով: Յաղթութիւնը, հարկաւ, տանում է Կոնստ. Ապոլլոնովիչը, իր գեղեցկութեան և ճարպիկութեան շնորհով:

Նրա մայրը, Մարիա Իգնատիեւնան (տիկ. Փառանձեմ) ուրախ է այդ յաղթութեանը, խրախուսում է որդու մտադրութիւնը՝ ամուսնանալ Հարուստ այրիի հետ: Նա աշխատում է, միևնոյն ժամանակ, իր տնից վռնդել որդու նախկին սիրուհուն իր փոքրիկի հետ, նաև այդ սիրուհու ուսանող եղբօրը—Միշային (Մամիկոնեան), որին դեռ կեանքը չի ապականել և որը, սակայն, մի թոյլ և ողորմելի էակ է: Այն լինչ Կոնստանտինի հայրը սկզբում չի հաւատում իր որդու բարոյական այլանդակութեանը, իսկ երբ որդին լիտերաբար ամեն լինչ պարզում է, երբ յայտնում է, թէ ուզում է ամուսնանալ Հարուստ այրիի հետ, ձգելով իր զաւակին և նրա մօրը, երբ այդ բոլորը լիմանում է, վաւաշում իդէալիստը կատաղում է և բորբոքւում: Պիեսը վերջանում է լրէալիստի ջերմ զգացումներով տոգորւած երկար արձակողական մի ճառով, որով նա ոտնատակ է անում ներկայ սերունդը և դիմում իր որդուն...

Պիեսի կենտրոնը մի կողմից այդ ծերունին և նրա վաղեմի ընկերն են, վերտառնական թաւականների ռուս երիտասարդութեան այդ վերջին ներկայացուցիչները, միւս կողմից Կոնստանտինը և նրա ընկերը Կրուտանոսովը, այժմեան երիտասարդութեան ներկայացուցիչները: Այդ երկու սերունդների բարոյական խստ և որոշ տարբերութիւնն է իրօք կամեցել պատկերացնել Պատապենկօն: Մի կողմից անշահասիրութիւն, մաքուր իդէալականութիւն, միւս կողմից, փողի երկրպագութիւն, խղճի և զգացումների վաճառք ոսկու տոպրակների համար—ահա պիեսի ծուէը: Յաղթութիւնը տանում է փողի երկրպագութիւնը: Կոնստանտինը ամուսնանում է Հարուստ այրիի հետ: Այրին հաշտւում է իր «ընտրածի» նախկին սիրուհու հետ: Այդ նախկին սիրուհին էլ ամեն լինչ նեղում է նրան, մինչև անգամ շնորհաւորում է: Հարուստ այրիի տաճ երեսուն հազար րուբլի կաշառքը ստիպում է նրան մոռանալ և՛ սէր, և՛ պատիւ, և՛ ինքնասիրութիւն: Այս կաշառքի տեսարանը, որ կատարւում է պիեսի վերջը, զզւելի է աւելի, քան այն բոլոր տեսարանները, ուր երևում է մարմնավաճառ Կոնստանտին Դրբոյլովը:

Դրականական տեսակէտից պիեսը ունէ շատ թերութիւններ: Նախ՝ միանգամայն անորոշ է ուսանող Միշայի տիպը: Երկրորդ, անհասկանալի է նրա քրոջ վարմունքը: Սկզբում այդ կինը, կարծես, երևում է բարոյական և պատւասէր. բայց Հսլատ օրիորդը, ոսկիների անուն լսելով, յանկարծ, առանց ներքին պատերազմի, մի րոպէում փոխւում է և իր բարձրութիւնից գլորւում: Անբնական է և չափազանցութեան հասցրած Հարուստ այրիի յարաբերութիւնը իր ծնողների հետ: Մի պատառ, որքան էլ փչացած լինի—իսկ Ուսկինան դեռ շատ էլ փչացած չի երևում—իր հարազատ հօրը

օտարի մօտ չի անանկիլ «Թեթեւամիտ», թէկուզ կատակով: Նրա հօր Պոլոկևի (Յարութիւնեան) տիպը տխուր չէ, այլ ծաղրանկարը, ինչպէս և ծաղրանկարը է և Կրուտանոսովը: Նոյն իսկ պիեսի դլխաւորը—բացասական տիպարը—Կոնտանտինը ամբողջացրած չէ, ուստի և՛ լիակատար տպաւորութիւն չի թողնում ընթերցողի վրայ: Ասում եմ ընթերցողի, որովհետև պ. Օհանեանի խաղի մասին խօսք չի կարող լինել, ինչպէս կրտեսնենք, այնքան այդ խաղը թերի էր: Վերջապէս ամբողջ պիեսը մի տեսակ նմանութիւն է Ալֆօնս-Պօղէի «La lute pour la vie» դրւածին:

Բեմական տեսակէտից պիեսը ձգձգւած է: Իւրաքանչիւր դրժողութիւն տևում է դրեթէ մի ժամ: Պիեսը լի է կողմնակի էպիզոդներով և աւելորդ խօսակցութիւններով, մանաւանդ երկու իդէալիստ ծերունիների զանազան աւելորդաբանութիւններով:

Գալով թարգմանութեանը, որ կատարել է պ. Յակոբ Տէր-Գէորգեանը, աւելի քան տող է կրիտիկայից: Դա թարգմանութիւն չէ, դա հայերէն լեզու չէ, այլ միայն պարօդիա:

Ի՞նչ ասեմ դերասանների խաղի մասին: Ինձ նախ և առաջ զարմացնում է պ. Օհանեանի համարձակութիւնը: «Տարաղը» չըղրեց երիտասարդ դերասանի առաջին դերին մասին, բայց տողերիս հեղինակը տեղական մի ռուս լրագրում նպաստաւոր կարծիք յայտնեց նրա մասին: Արդարև, պ. Օհանեանի առաջին դերը յաջող էր, բայց յաջող ոչ իբրև մի արուեստի խաղ, այլ իբրև մի նոր սկսող դերասանի առաջին փորձ: Պարոնն ունի բաւական լաւ բեմական տեսք, թէև ոչ այնքան արտայայտիչ, մաքուր արտասանութիւն և բեմական ձայն: Բայց այդ բոլորը դեռ շատ քիչ է Հայ Հասարակութեան համբերութիւնը լի չարը գործ դնելու համար: Իսկ պ. Օհանեանը այս անդամ լի չարը գործ դրեց մեր համբերութիւնը: Երևի, խրախուսած լրագիրների ներողամիտ կարծիքներից, նա երևակայեց իրան այնքան արդէն փորձած դերասան, որ կարող է միանդամից պատասխանատու դերեր կատարել: Եւ կատարեց անցեալ կիրակի... Հասարակութիւնը ստիպւած էր ամբողջ չորս ժամ բեմի վրայ տեսնել մի զարդարւած, կոկւած պահուճասպատանք, անշունչ, անկենդան, մի լարւած մեքենայ, որ արտասանում էր անգիր արած բառեր: Պ. Օհանեանը այնքան համարձակ էր, որ չէր բարեհաճել դերն անդամ լաւ սովորել, և ամեն քայլում սխալւում էր, կմկմում, անշնորհք աշակերտի պէս: Դա արդէն նշանակում է ծաղրել հայ հասարակութեանը, և մենք, որքան էլ ներողամիտ լինենք զէպի նոր սկսող բեմական ոյժերը, չենք թոյլ տալ նրանց մեր հաշակը ծաղրելու: Սակայն ոչ միայն պ. Օհանեանը, այլ և մեւս աւելի վորձառու դերասանները չըզիտէին իրանց դերերը այդ երեկոյ: Դա արդէն անտանելի է վերջապէս: Մարդիկ տասնուհինգ-քսան տարի է դերասաններ են, և մինչև այսօր չըզիտեն, որ դերասանը պէտք է դերը անգիր անի: Հըզիտենք, ինչ անուն պիտի տայինք այդ ներկայացմանը, եթէ չըլինէին պ. Վրոյրը, որ բաւական աղդու կատարեց Ճերունի Բըբօյլեվի դերը, պ. Յարութիւնեանը, որ վատ չըկատարեց Թեթեւամիտ Հօր դերը և մասամբ տիկ. Մելիքեանը Ուտկինայի դերում:

Անտանելի էր Հասարակութեան մի մասի վարմունքը: Հայ թատրոնում, կարծես, ծափահարութիւնները ոչինչ արժէք չունեն և կարելի է շռայլել, որքան կամենաք և ում կամենաք: Պիեսի գլխաւոր դերը պարզապէս փչանում է բեմի վրայ, և մարդիկ շարունակ ծափահարում են փչացնողին: Չէնց այս տեսակ ծափահարութիւններն են, որ փչացնում են մեր դերասատարներին:

Զ.

Թիֆլիսին յայտնի դերասան Լիւդ վիդովը իր խմբով մի ամսից աւելի է, որ արքունական թատրոնում ներկայացումներ է տալիս և հասարակութիւնը սիրով այցելում է այդ ներկայացումները: Խումբը կազմւած է բաւական լաւ կան մի քանի ձիրքով դերասանուհիներ, որոնց թւում և Մարտինովան, որ վայելում է հասարակութեան համակրանքը: Իսկ դերասանների մէջ աչքի ընկնում խմբապետ Լիւդվիգովը: Հայ դերասանները այս անդամ էլ ծուլութիւն են անում յաճախել ռուսաց ներկայացումները: Դա մի աններելի անփութութիւն է նրանց կողմից: Ռուս դերասանների խաղը կարող էր շատ բան սովորեցնել այդ մարդկանց, որ շատ թիւր դաղափար ունին իրանց արւեստի մասին:

—

Այսօր, կիրակի, մայիսի 5-ին վրաց ազնւականների թատրոնում հայ դերասանական խումբը կըներկայացնի հանդուցեալ յուշարար Կարապետ Մատինեանցի ընտանիքի օգտին Սունդուկեանցի «Էլի մեկ զոհ» կոմեդիան: Աչքի առաջ ունենալով ներկայացման բարի նպատակը և թատրոնական հանեստ գործիչի երկարամեայ ծառայութիւնը թատրոնին, յուսով ենք, որ հայ հասարակութիւնը չի պլանալ իր բարոյական պարտքը կատարել, այցելելով այս օրւայ ներկայացումը, որին մասնակցում են հայ խմբի բոլոր առաջնակարգ ոյժերը:

մատենախօսութիւն

ՎԵՐԱԴԱՐՁՐԱԾ ՅԱՆՑԱՒՈՐԸ, *պատմ. ւսաժք Զ. Դիկկէնսի, Թարգմ. ռուսերէնից Արշակ Եղիազարեանց, Թիֆլիս. 1896 թ. գինն է 8 կոպ.*

Դիկկենսի վէպերի հետ հայ հասարակութիւնը գրեթէ բոլորովին ծանօթ չէ: Հրատարակչական ընկերութիւնը, որի գլխաւոր պարտաւորութիւններից մէկն է տալ եւրոպական ընտիր վիպական և բանաստեղծական երկերի թարգմանութիւնները, մինչև այժմ մեր դարի այդ նշանաւոր վիպասանի գործերից և ոչ մէկը չէ տւել հայ հասարակութեան: Դա շատ հասկանալի է. մի ընկերութիւն, որ Նեմիրովիչ-Դանչենկոի նման ջրալի գրչով և զանազան աննշան Նեվմանովներով և Տիւտչեւներով է ոգևորւում, ժամանակ չի ունենալ եւրոպական հանճարեղ գրւածների ետևից ընկնելու,

Այն ինչ՝ հավիտ թէ լինի մի ուրիշ վիպասան, որի երկերի հոգին և ուղղութիւնն այնքան մատչելի լինին հայ հասարակութեանը, որքան Դիկկէնսինը։ Այդ անգլիացի հանճարեղ իմորիստ-վիպասանի վէպերը և վէպիկները կրթողական մեծ նշանակութիւն ունեն։ Այն քրիստոնէական վեհ և բարձր գաղափարները, որոնցով ողողուած են նրա գրուածները, կարող էին մեծ ծառայութեան անել հայ ընթերցողների բարոյական կրթութեանը։ Իսկ նրանց գեղարուեստական արժանիքներով հլացել և այժմ էլ հիանում են բոլոր եւրոպական նշանաւոր քննադատները, և մենք համոզուած ենք, որ Դիկկէնսի մի «Դոմբի և որդին» վէպը կամ «Դաւիդ Կոպերֆիլդը» կամ «Փոքրիկ Դորիտը» կարող էին աւելի թանդ գանձ լինել մեր թարգմանական գրականութեան համար, քան ընկերութեան հրատարակած տասն-քսան գրքոյկները միասին վերցրած։ Հայց ինչ արած, որ ընկերութիւնը չի ուզում կամ չի կարողանում իր քթից հեռու բան տեսնել և Կարշինից և Կորոլենկոյից դուրս տաղանդներ ճանաչել։

«Վերադարձած չանցաւորը» Դիկկէնսի բեղմնաւոր գրչի ամենափոքրիկ արտադրութիւններից մէկն է։ Դա 24 երեսից բաղկացած մի գրուց է, խորին զգացմունքով գրւած։ Թող կարդան հայ ընթերցողները և կարող են այս փոքրիկ գրուցով գէթ մի մօտաւոր գաղափար կազմել անգլիացի վիպասանի հանճարի մասին։

Թարգմանութիւնը թէև ունէ սխալներ, բայց բաւական սահուն պէտք է համարել, աչքի առաջ ունենալով Դիկկէնսի ինքնուրոյն ոճը։

Ջ.

մեր պատկերները

I

ՂԵՒՈՆԴ ԱՐՔ-ԵՊ. ՉԻՉՄԱՆԵԱՆ

«Տարազի» ներկայ համարում տպագրում ենք դեր. Ղևոնդ արք-եպիսկոպոս Չիշմանեանի պատկերը, որը, ինչպէս յայտնի է, տաճիկ կառավարութեան հրամանով Կարինի առաջնորդական պաշտօնից գահընկէց եղաւ։ Վերաշնորհ սրբազանը այժմ գտնւում է Երուսաղէմում։

II

«ՄԱՅԻՍ ԱՄԻՍ, ՍԻՐՈՅ ԱՄԻՍ»

Դոքթ. Ր. Մորկլի.

Գարուն... Օ՜, որքան խորհրդաւոր խօսք. նայեցէ՛ք նկարչի հզօր վրձինի ստեղծագործութեան, թէ ինչ է շշնջում Ամուրը կոյսի ականջին և թէ ինչպէս սա, զոյնզգոյն ծաղիկները գոգին, դիմել է խորհրդաւոր շշնջիւնից և յառել իր թախծալի հայեացքը անորոշ տարածութեան մէջ։ Դա գարնան դիմել է աղեցութիւնն է. դա ծաղիկների բուրմունքի, երկնային երգիչների անուշ երգի հրապոյրն է, որ հմայել է կոյսին և հրաւիրում է սիրել։

Երգիչը առաւ իր քնարը, զարկեց լարերին և փառաբանեց գարնան երգում։ Անուշաբոյր զեփիւռը, մարգարտափայլ ջրերը իրանց կարակաչիւնով, սիրուն թռչնիկը իր դայլայլիկով և ամբողջ շքեղ բնութիւնը միացան պօէտի երգին և մեծ երգ կազմեցին։ Երգը դեղդեղալով՝ արձագանք տւեց, բոլոր աշխարհին ազդարարեց գարնան գալը։ Ասուն, անսասուն և ամեն տարբեր սրտատրոփ դուրս եկան իրանց յարկի տակից, ողջունեցին գարնան գալը և ծառի ծաղկելը։ Ո՞ր վրձինը կըսևացնի պայծառ գարնան պատկերը, ո՞ր երգիչը չի զմայլիլ գարնան հրաշալիքներով. ո՞ր սիրտը չի բերկրիլ գարնանը։ Այո՛, ամեն բան հրճւում է գարնանը։ Սակայն...

«Ինձ համար չէ գարնան գալը,
Ինձ համար չէ ծառի ծաղկելը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ոչ մի բերկրանք չեն ինձ համար»...

III

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Այս տարւայ Յունիսի տօներին Անգլիքը ամբողջ աշխարհքը հրաւիրել էր մասնակցելու և կամ ներկայ լինելու մի միջազգային հանդէսի—Օլիմպիական խաղերին։ Յայտնի է, որ հնումը յոյները հասարակական խաղեր ունէին, որոնց մէջ ամենանշանաւորը Օլիմպիական խաղերն էին, որոնց մասնակցում էին բոլոր յունական ցեղերը։ Մրցանակներ տանողներին վարձատրում էին դափնեայ պսակներով։ Մեր նկարը ներկայացնում է մի այդպիսի տեսարան, ուր ընթերցողը հեշտութեամբ կըճանաչի իւրաքանչիւրի դերը։

Այդ խաղերը, որ սկսւել էին 776 թւականին Քրիստոսից առաջ, վերջացաւ 376 Քրիստոսից Թ. յետոյ։ Հայց աւելի քան 1500 տարի անցած՝ այն է 1894 թւականին աթլետիկական միջազգային կոնգրէսը Պարիզում միաբ ցյացաւ և ահա այժմ իրագործեց վերանորոգելով Օլիմպիական խաղերը, ուր հրաւիրեցին մասնակցել բոլոր ազգերից ներկայացուցիչներ։ Մարմնամարզական ամեն տեսակ խաղեր, գնդակներ ու դիսկեր գցել, ոյժ չափել, վազելում մրցել և այլն—ահա թէ ինչումն են նրանք կայանում։ Առաջին խաղերը վճռւած էր սարքել Աթէնքում, ի պատիւ հին յոյների հայրենիքի։ Հանդէսի (բացօդեայ) շինութիւնը (ոտաղ կոչւած) ահագին տարածութիւն է բռնում 60.000 մարդ տեղաւորելու համար։ Հանդէսի նախապահը յունաց թագաժառանգն էր։ Հանդէսը մեծ յաջողութիւն ունեցաւ։ Մրցութիւններից ամենահետաքրքրականը վազքը մրցութիւնն էր, որի համար պէտք էր ոտով անցնել 42 կիլոմէտր (39'/2 վերստ) Մարաթոնի պաշտից մինչև Աթէնքի ստադի շինութիւնը։ Այդ մրցանակը տարաւ Աթէնքի մօտ գիւղի բնակիչ Սպիրիդիոն Լուիս, որը այդ տարածութիւնը անցաւ 2 ժամ 58 րոպէ. 59 վայրկեանում։

Յոյների ոգևորութեան աստիճանը կարելի է իմանալ նրանով, որ այդ մրցանակը տանողին զանազան անձինք ապահովացրել են կեանքը, որը ուտելի, որը շորի, որը կօշիկների կողմից և այլն։

լուրեր

«Տարազի» անցեալ համարում տպագրել էինք լորդ Սոլիսբիւրիի ճառից կտորներ, որ հեռագրել էր Ռ. Չ. դրծակալութիւնը։ Այժմ առաջ ենք բերում այդ ճառի այն մասը, որ հայերին է վերաբերում։

«Ես կարծում եմ, ասաց Սոլիսբիւրին, որ Հայաստանում տեղի ունեցած արիւնչեղութիւնների համար անձնասէր սուլթանին չըպէտք է պատասխանատու համարել։ Այդ սպանութիւնները առաջանում են ցեղերի և դաւանութիւնների մրցումից և առհասարակ կառավարում են թոյլ կառավարութեան օրով։ Այդպիսի կառավարութեան

վրայ կարելի է ազդել երկու ձևով, առաջինը՝ այդպիսի կառավարութեան պէտք է առաջարկեն պահանջներ եւրոպական համաձայնութեամբ, որի իշխանութիւնը նա միշտ ճանաչել է։ Երկրորդը՝ յորդորներն են։ Այս միակ գէնքը, որ այժմեան կառավարութեանը թողել էր նախկին մինիստրութիւնը, որի քաղաքականութիւնը հարկադրած շարունակում էր, յորդորներըն էին. և կառավարութիւնը գործադրեց այդ պատռնական միջոցը, որքան ժամանակ պահանջում էր. սակայն այդ վարմունքի միակ հետևանքը այն եղաւ, որ գրգռեց նրանց վայրենական կրքերը, որ սաստիկ երկիւղ էին կրում իրանց ցեղի և գաւանութեան դերակշռութեան համար։ Այդպիսով անգլիական կառավարութիւնը իր վարմունքով ակամայ առաջացրեց խիստ սարսափելի աղէտներ։ Այդ ժառանգութիւնն է թողել Բոզբերրիի կաբինէտը»։

Այսպէս Սոլիսբիւրին դատապարտում է իր նախորդի քաղաքականութիւնը, բնաւ մոռանալով իր որոտընդոստ ճառերը, որոնցով կամենում էր Տաճկաստանը հիմն ի վեր կործանել։ Այդ բաւական չէ. անգլիական մեծապատիւ պրեմիերը կարծէք այժմ շողոքորթում է սուլթանին։ Երևի առաժամանակ անցնելուց յետոյ նրան կըսկսի մինչև անգամ գովաբանել։

—

Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը որոշել է եկող տարւանից մասնագիտական դասատուն բանալ։

—

Այսուհետև գինիների և գարեջուրների վրայ տուրք է դրելու 1¼ կ. սկսած մինչև 15 կոպէկ ամեն մի շշին։

—

Կ. Պոլսից անգլիական լրագիրներին հաղորդում են, թէ այնտեղ ձերբակալեցաւ հայոց դպրոցի պրոֆէսոր Պոլ Վիլիար, «Էռևանտէ» սիէսի հեղինակը, որ մօտերս ներկայացրել են Պարիզում։ Ձերբակալութիւնն առանց մի որ և է պատճառի է տեղի ունեցել։ Նրան տանում են Ստամբուլ, ուշք չդարձնելով նրա բողոքին և բաց են թողնում այն ժամանակ, երբ ֆրանսիական դեսպանը միջամտում է։ Վերջինս այժմ Պունից խոշոր վարձատրութիւն է պահանջում ֆրանսիական հպատակին վիրաւորանք հասցնելու համար. նմանապէս պահանջում է, որ ոստիկանութեան մինիստրը ներողութիւն խնդրէ և պատժի ենթարկէ յանցաւոր ոստիկաններին։

—

Զինւորական նախարարութեան համար առաջիկայ Թագադրութեան առիթով որոշուած է 2½ միլիօն րուբլի ծախք։

—

Ի. Ֆ. Գ. հեռագրում է, որ Կ. Պոլսում բազմաթիւ հայեր կալանաւորուեցան։

—

«Նով. Վր.» լրագիրը, որ մեծ եռանդով հայերի վրայ ինչ մեղադրանքներ ասես բարձում է, Թիֆլիսի քաղաքապլխի մասին էլ չէր զլացել մի սուտ յիշատակելու։ Ահա իշխան Ն. Արղութեանի հերքումը. «Պ. Խմբագիր, «Նով. Վր.»-ի 7198 №-ում գետեղած Թիֆլիսի թղթակցութեան մէջ ասւած է ի միջի այլ բաների, որ քաղաքագլուխ իշխան Արղութեանի (ինձ) մօտ եկել են երկու երիտասարդներ, սլահանջելով ինձանից 10 հազար րուբլի տալ տաճկահայերի համար և մանրամասնաբար նկարագրւած է, թէ ինչպէս ես այդ երիտասարներին չանձնել եմ ոստիկանութեան ձեռքը և չեմ տւել խնդրած փողը։ Որովհետև ինձ հետ այդպիսի դէպք տեղի չի ունեցել և ձեր թղթակցի գրածը սկզբից մինչև վերջը բոլորովին սուտ է, չեմ իմանում ինչ աղբիւրներից քաղւած, ես, ճշմարտութիւնը վերականգնելու համար՝ պատիւ ունեմ խնդրելու ձեզանից, չըզլանալ իմ այս հերքումը տպելու ձեր լրագրի մերձակայ համարներից մէկում»։

Ինչ ասել կուզէ, որ վերոյիշեալ թերթը տպելով այդ հերքումը՝ աշխատել է արդարանալ անարդար կերպով։

—

«Թայմսի» Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է ապրիլի 20-ին, թէ որովհետև Դուրը չէ պատասխանում վեց պետութիւնների բողոքին Զէյթունում մահմեդական գայմագամ նըշանակելու մասին, ուստի դեսպանները որոշեցին ժողովւել և խորհրդակցութեան առնել, թէ ինչ են անելու ապագայում։ Երևի դեսպանների ազդու դիմումներից յետոյ՝ Դուրը շտապել է—ինչպէս հեռագրում է Ռ. Տ. գործակալութիւնը—պատասխանել, թէ Զէյթունի համար մահմեդական գայմագամ նշանակելը ժամանակաւոր բնոյթ ունի և շուտով քրիստոնեայ գայմագամ կընշանակւի։

—

Այն բարձրաստիճան անձինք և ներկայացուցիչները, որոնք պէտք է մասնակցեն Նոցին Կայսերական Մեծութիւնների Մոսկւա ժամանելու հանդիսին, հրաւիրւում են լինել Մոսկւայում ոչ ուշ քան 6-ը մայիսի, իսկ նրանք, որոնք պէտք է Մոսկւա գնան Թագադրութեան հանդիսի համար, պէտք է Մոսկւայում գտնւեն ոչ ուշ քան մինչև 8-ը մայիսի։

—

Վերջերս հրատարակած վիճակագրական և պաշտօնական տեղեկագրերից երևում է, որ Կովկասում և Անդրկովկասում հայերի թիւն է 985,460, իսկ ամբողջ Կովկասում, բոլոր ազգութիւններն ի միասին վերցրած՝ 7,611,671։ Այս տեղեկութիւնները կազմած են 1886 թւին, համարեա տասն տարի առաջ։

—

Ապրիլի 24-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանւեց Մոսկւայում Փ. Ա. Կումանինն, նախկին խմբագիր «Արտիստ» ռուսաց դեղարւեստական ամսագրի։ Այս ամսագիրը սկսեց հրատարակել 1889 թւի աշնանը։ Այս գեղ ամսագրի շուրջը հաւաքւեցին շատ գիտնականներ, գրականագէտներ, նկարիչներ, արտիստներ և նա միանգամից հասարակութեան համակրանքը գրաւեց։ Թէ նիւթերի առատութեան և թէ գեղութեան կողմից «Արտիստը» Ռուսիայում աչքի ընկնող և չեղած հրատարակութիւն էր։ Հանգուցեալը բացի Զուդերմանի բոլոր պիեսների թարգմանիչ լինելուց, յայտնի է և իբրև հեղինակ։ Ունի և հրատարակած առանձին գրքոյկներով ուրիշ երիտասարդ հեղինակների գրւածքներ։ Սրանից կէս տարի առաջ, «Արտիստը» անցաւ ուրիշների ձեռքը, իսկ Կումանինը սկսեց հրատարակել «Театралъ» և ապա «Читатель» թերթերը։ Նա մեռաւ 42 տարեկան հասակում։

Հանգուցեալը իբրև դեղարւեստական

հանդէսի խմբագիր, շատ սիրալիր էր դէպի «Աղբիւր-Տարազը» և սիրով փոխանակում էր, իբրև բացառութիւն, իր շքեղ հրատարակութիւնը մեր հանդէսների հետ։ Նա չէր զլանում նոյն իսկ կլիշէների փոխադարձութեամբ օգնելու մեզ, հակառակ իր սովորութեան և կանոնների։

Փ. Ա. Կումանինի պէս գեղարեստական հանդէսների սիրահարները հազուագիւտ են ամբողջ Ռուսիայում. նրա «Արտիստը» մրցում էր եւրոպական նոյնանման հրատարակութիւնների հետ։

Խառն յուրեր

Նասր-էդդինն Շահի սպանումով, ինչպէս երևում է, Պարսկաստանի մի քանի քաղաքներում խառնակութիւններ են տեղի ունենում, մանաւանդ Ջիրադում։ Մի քանի անձինք պատիժներ կրեցին այնտեղ. զգացւում է մթերքների պակասութիւն։ Ցուկաները փակած են։

—Տրապիզոնում կալանաւորեցին սլարսիկ բարիական աղանդի երեք անդամի։ Կ. Պոլսում ոստիկանութիւնը որոնում է ձերբակալելու պարսիկ աղանդաւորներին։ Յայտնի չէ թէ Մահմէդը փախաւ։ Չորրորդ զօրաբանակին հրամայւած է պարսկական սահմաններին վրայ խստութեամբ հսկել։

—«Թայմսը» այն միտքն է յայտնում, թէ ի նկատի ունենալով Ռուսիայի եռանդով դործունէութիւնը Հիւս. Պարսկաստանում, հաստատուն կերպով պահանջւում է, որպէս զի Անգլիան, որ առաւելութիւններ ունի Հիւս. Պարսկաստանում, հզօրացնի իր դիրքն այնտեղ։ Դրա համար—այդ լրագրի ասելով—կարևոր է, որ Բելուջիստանի մուտքը բաց լինի, ինչպէս ռազմական, այնպէս և առևտրական կողմից։

—Ռուղղարական իշխանը մեծ հանդէսով ժամանել է Սերբիա, Բելգրադ մայրաքաղաքը։ Նրան դիմաւորել են սերբիական թագաւորը, մինիստրը, իշխանութիւնները և այլն։ Իշխանը միւս օրը ուղևորւեց Սոֆիա։

—Պոլիս, 26 ապրիլի։ Ապրիլի 25-ին սուլթանը ընդունեց ռուսական դեսպանին։ 26-ին նոյն ամսի նա ճանապարհ ընկաւ Օդեսսա և այնտեղից Մոսկւա թագադրական հանդէսներին ներկայ գտնելու։ Ուղևորւեց նոյնպէս Մոսկւա տաճկաց պատգամաւորութիւնը։ Ռ. Ֆ. Գ.

—Կ. Պոլսից «Թայմսին» հեռագրում են, որ պարսից Շահի սպանութեան դէպքը սուլթանի վրայ սարսափելի տպաւորութիւն է թողել։ Տաճիկ լրագիրներին այդ մասին արգելւած է բան գրելու։

—Ֆրանսիական դեսպանը մի յայտագիր է ներկայացրել Դրանը Մարաշի մէջ կատարուող դէպքերի և դժւարութիւնների մասին, որ տաճիկ իշխանութիւնները Ենիջէկէում պատճառում են Ֆրանցիսկեաններին իրանց կրօնական պաշտամունքների ժամանակ։ Դեսպանը պահանջում է Մարաշի նահանգապետին հրաժարեցնել։

—Կ. Պոլսից լրագիրներին հաղորդում են, թէ վերջերս անգլիական պօստային գրասենեակի մօտ հայերի և ոստիկանների մէջ մի կռիւ է տեղի ունեցել։ Հայերին կամենում էին ձերբակալել, որոնք թւով 29 հոգի էին։ Սպանւած է ոստիկանութեան գործակալը։ Ասում են՝ ոստիկ. գործակալին սպանողները յեղափոխականներ չեն, այլ հասարակ յանցագործներ, որոնց կառավարութիւնը հետևում էր։ Դրանց պլխաւորը ձերբակալւած է։

—Իտալական զօրքերի հրամանատար Բալդիսերան հրաւիրել է Մանդաշի, Սեբաստի, Ագոստաֆորի ցեղերին ապատութիւն տալ իրանց մօտ պտնուող իտալական գերիներին։ Ագոստաֆարին ապատեց իր ձեռքի տակը պտնուող գերիներին, իսկ Սեբաստին և Մանդաշան բացասական են պատասխանել։ Բալդիսերան հրամայել է զործ դնել արտակարգ միջոցներ։

—Վիեննայից հեռագրում են լրագիրներին, որ քրդերը մի քանի անգամ յարձակեցին հայերի և նեստորականների վրայ իրանց գիւղերում, որոնց միջոցին մի քանի հոգի սպանուեցին. սպանողները թուրմն է և Տատման գիւղի քահանան։ Քրդերի այդ վարմունքներից երկիւղի մէջ է ժողովուրդը։

—«Նովոստի» լրագրին Վիեննայից հեռագրում են. «Տեղիս պարսից դեսպանը (հայազգի Նարիման խանը) յայտնեց «Neue Freie Presse» լրագրի թղթակցին, թէ Փրանսիան, Աւստրիան և Տաճկաստանը հետևելով Ռուսիայի և Անգլիայի օրինակին, ճանաչեցին Մուսաֆար-էդդինին Պարսկաստանի շահ։ Թղթակցի հարցին ռուսական ազդեցութեան մասին Պարսկաստանում, դեսպանը պատասխանեց. «Ռուսիան, իր իմաստուն քաղաքականութեամբ ամեն տեղ ազդեցութիւն ունի, այն ինչ Անգլիան անյաջողութեան է հանդիպում թէ Տաճկաստանում և թէ Պարսկաստանում»։

—Ձերնոգորիայի թագաժառանգ պրինցը հասաւ Վիեննա։ Այդտեղից գնում է Մոսկւա թագադրութեան ներկայ գտնւելու։

Աղ եւ աղք

ՎԷՅ ՄԱՍԿԱՆԻԱՅԻ ԵՒ ԼԷՕՆԿԱՒԱԼԼԱՅԻ ՄԻՋ

Մօտիկ ժամանակներումս Մասկանիայի և Լէօնկաւալլայի մէջ մի մեծ վէճ ծագեց։ Միլանի Il Carno լրագիրը իր ժամանակին մերկացրեց այն բոլոր վոխառութիւնները, որ Մասկանիան արել էր ուրիշ կոմպոզիտորներից և այդ բան աւելի տեսական դարձնելու համար՝ բերւած է նմուշներ նրա օպերաներից։ Այժմս իմանում ենք, որ այդ նմուշների ցանկը պատրաստել է Լէօնկ սւալլան, որին, ի հարկէ, Մասկանիան չզլացաւ մի շատ ծիծաղաշարժ պատասխան տալ. նա խոստանում է Լէօնկաւալլայի աշխատութիւնների միջից քաղել ու մի վոքրիկ բրօշիւրով հրատարակել այն սակաւաթիւ կտորները, տեղերը, որոնք բացառապէս միայն վերջինիս գրչին են պատկանում, և նա ոչ մի տեղից չէ վոխառել։

—

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԾԵՐԵՐ

Չակառակ այն ընդհանրացած կարծիքի՝ թէ ծերութեան ժամանակ մարդու մտայնն ուժերը սպառւում են, „Westminster Gazette“-ը բերում է երևելի մարդկանց մի ցանկ, որոնց մէջ առաջին տեղը դրւած է, ի հարկէ, Գլադստոնը, իսկ դրանից յետոյ յիշւում է Փրանսիայի մէջ—Կրէբիլեօն—հայրը, որ իր վերջին տրագէդիան գրել էր 84 տարեկան հասակում. Վոլտերը և Վիկտոր Հիւգոն, որ նոյն հասակում դարձեալ արդիւնաւէտ գործունէութիւն գոյց տւին, Իտալիայում—Միքել Անջելոն և Տիցեան, որ աշխատեցին մինչև 90 տարեկան հասակը։ Ամերիկայում—Ֆրանկլին, որ 82 տարեկան հասակում հանրապետութեան նախագահ էր։ Անգլիայում—Նիւտոն, որ մինչև 83 տարեկան հասակը աշխատելուց չդադարեց, Վորդսվորտ, Տեննիսոնը, Բրումը և, վերջապէս, Պալմերսթոնն, որ իր երկար աշխատանքի ընդունակութեան պատճառը բացատրում էր նրանով՝ որ նա երեկոները ոչ միայն երբէք չէր աշխատում, այլ և նոյն իսկ, Ֆրակի հետ միասին, իր վրայից ձգում էր և ամեն մի հոգս գործերի մասին։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Թիֆլիս. Խաչատուր Մալումեանին։ Որ եղել են հրապարակախօսներ, որոնք «հայոց մամուլի պարծանքն են կազմում», այդ բանը մենք նոր չըպիտի լսենք. բայց որ այդ արժանաւոր ուսուցիչների արժանաւոր աշակերտը լինէք դուք—ահա մի հարց, որին պատասխա-

նելը ձեզ չի պատկանում։ Եթէ մեր վկայութիւնը կարևոր է դոքա համար, մենք կ'ասենք դրա-կանապէս որ դուք այդ ուսուցչիչների արժանաւոր աշակերտը չէք։ Իմացէք նաև, որ անհամեստութիւն չէ եթէ նոյն իսկ դուք հրապարակաւ շնորհակալութիւններ յայտնէք որևէ բանի համար. բայց արդէն ոչ միայն անհամեստութիւն է, այլ և զզրուխտ է, երբ «Աշակերտ» տպաւած առանց կենդի երկու ջուխտ դրութիւնները ձեզ բաւական են թւացել որ հրապարակաւ դաք շնորհակալութիւն յայտնելու այն բոլոր անձանց, որոնք, ինչպէս դուք էք պնդում, «լսմբովին և թէ առանձին առանձին, հոսպրերով և նամակներով պատիւ արեցինին» (Պալումեանիդ) յայտնելով իրանց ջերմ համակրութիւնը»։

Խնդրում ենք նեղութիւն կրէք մեր կասկածը այդ մասին փարատելու, թւելով այն անձերին, որոնք մինչև ձեր դրութեան օրը (մայիսի 3) ձեզ՝ Պալումեանիդ՝ ջերմ համակրութիւն են յայտնել։ Աշակերտ տպաւած էին մի քանի դրութիւններ, որոնք խիստ պատապարել էին բուն նպատակը այն էլ թատրոնի պէս հրապարակական տեղում, բայց մենք չենք կարդացել ջերմ համակրութեան մի հատ բառ ձեր՝ Պալումեանիդ՝ մասին։ Եթէ դրուղի պատիւ էք ճանաչում—պատասխանեցէք, որովհետև մենք մեղադրում ենք ձեզ կեղծութեան մէջ։

Գալով Տ. Նազարեանի «զգոյշ կացէք» բառերին որ նա ուղղել է ձեր խմբագրութեանը, դոքա կարող են «խորհրդաւոր» լինել, բայց մի վայրկեան անդամ չենք կարող թոյլ տալ որ պ. Նազարեանը այդ բառերով որևէ «ոստիկանական» սպառնալիք արտայայտած լինի։ Դա էլ ձեր ինքնուսոյիանիներից մէկն է...

Ժամանակաւոր խմբագիր՝
ԱՒԵՏԻՔ ԱՐԱՄԽԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Լոյս տեսաւ Մուրճ № 3—4 (մարտ-ապրիլ), որի բովանդակութիւնն է՝

1. *Աղէքսան*—Հիւանդոտ խիղճը (պատմուածք)։
2. *Մանուէլեանց, Լևոն.*—Կանուչ անպատանը (ոտան.)։
3. *Դէօթէից*—Մաժինեան, Հ.—Էգմմոնտ (դրամա)։
4. *Ծատուրեան, Ալ.* – Եթիմի շիրիմը (ոտան.)։
5. *Փափազեան, Վ.* – Ատուճոյ համար (պատմուածք)։
6. *Ծատուրեան, Ալ.*—Գրչի հանաքները (ոտ.)։
7. *Զաքարեանց, Մկրտ.*—Կողբայ աղահանքը։
8. *Շանթ.*—Պլացուհիս (ոտ.)։
9. *Նոյն.*—Հոգմալոյը (ոտ.)։
10. *Միքիմանեանց, Յար.*—Ըղթա Բուստաւելի և նրա պօէման։
11. *Տէր-Մարտիրոսեանց, Յ.*—Երևանի բամբակի առուտուրը։
12. *Վարդանեան, Գրիգոր.*—Թուս գիւղացիների պարտքերը և վերջը։
13. *Մ'ղաւորեան, Յ.*—«Ազգապրական Հանդէս»-ի մասին։
14. *Արտահանեանց, Ա.*—Ժամանակակից տեսութիւն։ Հայկական խնդիրը. Ընդհանուր դրութիւնը։ Նպաստների գործը։—Պատրիարքի հաշիւը։
15. Դատաստութիւնների խնդիրը Սլաւեան Բարեգ. ընկ. մէջ (գեն. Կիրէեւի ճառը)։
16. *Լուսինի.*—Բարեգործ. ընկ. Ախալցխայի ճիւղի առիթով։
17. *Մանուէլեանց, Լևոն.*—Հայկական Թատրոն։ V.
18. *Սեւեան, Հ.*—Թատրոնի շուրջը։ VII.
19. *Փափազեան, Վ.*—Անգլիական նամակներ։ VII.
20. *Խմբ.* — Մուրճի նիւթերը 1889—95 թ.
21. *Խմբ.*—Լուրեր։
Յայտարարութիւններ։

Լոյս տեսաւ «Աղբիւր» № 4 և ուղարկուեց բոլոր բաժանորդներին.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ. *Տիեզերահռչակ նկարիչ Ռաֆայէլ* (պատկեր)։—*Գարուն* (ոտանաւոր) Պ. Մոճուեանց։ *Հրնշտակ* (Անդերսէնից) – Ծր. Ա. Տէր-Յակոբեան։—*Բացուիր, բացուիր* (ոտանաւոր) Աշուղ Հազրլի։ — *Պարոդ-խաղատիկին Թարգմ.* Ծր. Վարդ. Աւետիքեանցի։—*Սուքօ Ամին* (ոտան.) Յովհ. Կոստանեանցի։— *Փոքրիկ Օգիւստան* (փերպարդէնից Թարգմ. Մանուչար)։—*Արշալոյսը Էլզաս-Լորէնում* (պատկեր)։—*Որքի պահանջը* (ոտան.) † Մուշեղ Մամիկոնեանի։

Սկզբնական ծանօթութիւն բուսաբանութեան մասին Ա. Ռ-ի. *Բնագիտական զրոյցներ.* Ե. Թոփչեանի։

Դիտական զբօսանք II. (պատկերով). Ինչպէս կերպարանափոխել ջուրը գինու։

Զուարճալիք։ Հանելուկներ. Առաջարկութիւններ. Բացատրութիւններ։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ։ *Ջունը և նրա պայմանները.* † Մուշեղ Մամիկոնեան։

Յայտարարութիւններ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պասը, մայիսի 5-ին ընկերային թատրոնում

Հայ դերասանական խումբը
ի նպաստ հանգուցեալ յուշարար
ՄՈՍԻՆԵԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ
Ներկայացնելու է
ԷԼԻ ՄԷԿ ԶՈՀ
հեղ. Գ. Սունդուկեանցի.

Թարգմանուած է և պատրաստ տպագրութեան համար աւստրիական կին մատենագիրը Բ. Զուտների ԶԻՆՔԵՐԸ ՅԱՆՔ հեղինակութիւնը։

Թարգմ. Լ. Դանիէլեան

2—3

Дозв. ценз. Тифлисъ, 5 мая 1896 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца, Орбел. ул., д. № 1—2